

Ձեր Ազգին համար բացուելիք Գարանոցի ի նպաստ ընէք այն, ինչ որ Ձեզ կ'իյնայ: Ես կը վստահացնեմ Ձեզ եւ հայ վաճառականներուն, որ այս պիտի ըլլայ ի մեծ ծառայութիւն Աստուծոյ եւ ի վառս եւ յօգուտ համօրէն հայ Ազգին:

Ձգիտենք թէ ինչ արդիւնք ունեցան այս թղթակցութիւնները: Յովհ. Թաղէոս եպիսկոպոսի մահը խափանարար եղաւ ծրագիրներու յաջողութեան: Թղթակցութիւնները կ'ենթադրեն եպիսկոպոսի բերանացի սեղեկատուութիւնները. անոր անձին վրայ թէ Հայք եւ թէ Ս. Աթոռը ունէին կատարեալ վստահութիւն:

38. ՀՌՈՄԻ ՄԷՋ ԳՊՐԱՆՈՅ ՄԸ ԲԱՆԱԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Հոռոմի մէջ Գարանոց մը (collegio o seminario) բանալու առաջարկը, զոր Հ. Յ. Թաղէոս 1630ին կը դնէր Ս. Ժողովի առջեւ, օտարոտի չհամարուեցաւ: Ի վազուց հետէ կար արդէն այս խնդիրը Ս. Ժողովի սեղանին վրայ. ունէր մօտ 50 տարուան պատմութիւն:

«Ս. Պիոս Ե. Հայոց ազգին բարերար քահանայապետներէն մէկը (1566—1572)՝ Ս. Մարիամայ Եգիպտացոյ եկեղեցին եւ Հիւրանոցը քովի տներով՝ ազգին շնորհած էր. Գրիգոր ԺԳ. (1572—1585) իր գուլթն եւ առատութիւնը անով աւելի եւս ցուցուց ազգին, որ ինչպէս Յունաց, այսպէս ալ հայ պատանեկաց համար Հոռոմ վարժարան մը հաստատելու